

ւեռագրութեանց մէջ պատահած 1. պատմական և 2. աշխարհագրական բոլոր յատուկ անուանների:

Հր. Աձ.

Մարիա Կորեկի, Մի մանկան հոգու պատմութիւն. վեպիկ ո՛չ մանուկների համար: Ռուսերէնից քարգմանեց Տ. Վ.: Վաղարշապատ, 1902 (գինն է 1 ռուբլի):

Մարիա Կորեկու «Մի մանկան հոգու պատմութիւն» վէպիկը մեղանշում է ամենահամեստ գրական պահանջների առջև: Այս գրուածքում բացակայում է հոգեբանական ճշտութիւն, կեանքի նկարագրութիւնը անհամապատասխան է իրականութեան և հերոսների գէմքերը միանգամայն շինծու են: Մի խօսքով մի մանկան այս պատմութիւնը գրական—գեղարուեստական անշնորհք արտագրութիւն է: Բայց և այնպէս Մարիա Կորեկի երևի բախտաւոր աստղի տակ է ծնուել, որովհետեւ նրա վէպիկը թարգմանուել է ռուսերէնի և ռուսերէնից հայերէնի:

Ջոն Վեյլսիկուրտ և նրա կիներ՝ Ելենան պատկանում են անգլիական բարձր դասակարգին և ունին միայն մի որդի՝ Լիոնէլ անուանով: Հայրը՝ «բնական փիլիսոփայութեան և անխառն բանականութեան» ջերմ կուսակից լինելով՝ կրթում է իւր որդուն՝ նոյն սկզբունքներով և միաժամանակ հսկում է, որ կրօնական և քրիստոնէական զգացմունքի մի շող անգամ չթափանցէ իւր որդու սիրտը: Միւս կողմից այս «յառաջագիմական» հայրը քայքայում է Լիոնէլի առողջութիւնը, արգելելով իւր միակ որդուն զբօսանք, մարմնամարզութիւն, մանկական դուարձութիւններ, — չմոռանանք որ այդ անում է գիտութեան և գրական ուսմունքների ծանօթ մի հայր: Վայրենի սեւամորթ մարդն անգամ իւր երեխային այնպէս չի վերաբերուի, ինչպէս այս դաժան անգլիացի ջենդլմէնը: Ո՛չ մի բարի զգացմունք, ո՛չ մի հայրական քնքշութիւն. Ջոն Վեյլսիկուրտ դուրս է բերուած, որպէս մի հալածիչ ոտոխ իւր միակ որդու: Ելենան՝ նրա կինը, որի սրտից ամուսինը յաջողութեամբ արմատախիլ է արել

աստուածաբաշտութեան զգացմունքը՝ թողնում է ամուսնուն և երեխային և մի կասկածելի սիրահարի մօտ է փախչում: Վէպիկի մէջ հոգեբանական տեսակէտից նոյնքան անբնական է մօր անտարբեր և սառն վերաբերմունքը դէպի իւր միակ որդին, որբան և դաժան հօր զիւական կերպարանքը: Փոքրիկ Նիոնէլը կարծես մի ուրիշ մալորակի վրայից աշխարհ իջած լինի: 11 տարեկան հասակում նրա ուղեղը շարունակ զբաղուած է բնագանցական և քրիստոնէական—բարոյական խնդիրներով, և հեղինակը նահատակում է խեղճ երեխային բնագանցական այնպիսի հարցերի քննութիւնով, որոնցով զբաղւում են միմիայն մասնագէտ փիլիսոփաները: Փիլիսոփայ երեխան քննում է հոգու անմահութեան, Աստծու գոյութեան և քրիստոնէական վարդապետութեան դադանիւնները: Հեղինակը միանգամայն իրաւունք ունի սկզբնապատճառ հիւլէներէ նւթապաշտական դաւանանքին հակառակ լինելու, սակայն գրական—գեղարուեստական տեսակէտից աւելի քան անբնական է, որ նա իւր բնագանցական—կրօնական credo—ն (հաւատամքը) երբեմն յատկացնում է փոքրիկ Նիոնէլին, և վերջինս հեղինակի կարծիքների արտայայտողն է դառնում: Այս խեղճ երեխան, որը 11 տարեկան հասակում՝ մեծ մասամբ չորս պատերի մէջ փակուած՝ սովորում է գրական, թուաբանական, պատմական և ամէն տեսակ գիտութիւններ իւր դարհուրելի յառաջագիմական հօր բեցեպատով՝ բնտանեկան գոթիային կեանքին չզիմանալով ինքն իրան կախում է. և տխուր նահատակութեան պատասխանատուութիւնը բնկնում է ըստ հեղինակի յառաջագիմական ծնողների, գրքերի («որոնց, իհարկէ, Աստուած չէ ստեղծել»), գիտութիւնների, գրական փիլիսոփայութեան, Ֆրանսիայի և ուսուցչապետ չորի վրայ, որը նման է «կապիկ և ուղտի միջին տեղը բռնող մի կենդանու» և որի մասին Օքսֆորդում և Քէմբրիջում կարծում են թէ նա հանճար է:

Արդէն այս համառօտ բովանդակութիւնից երևում են վէպիկի ակնյայտնի թերութիւնները: Տ. Վ. մեծ սխալ է արել, որ թարգմանութեան համար ընտրել է մի այսպիսի անշնորհ գրուածք, մինչդեռ եւրոպական գրականութեան ամենանշանաւոր երկերը մնում են հայ հասարակութեան անճանօթ: Եթէ թարգմանիչն առանձին նպատակ ունէր՝ հայ ժողովրդին մասնաւոր առումով քրիստոնէական վարդապետութեան վսեմութիւնը՝ նուրբ, արդարամիտ և խորը կերպով պատկերացրած նորագոյն գրական երկերում՝ աւելի նպատակադարձոր կը լինէր թարգմանել արդի գրականութեան քրիստոնէական ոգին և սկզբունքները

կենդանի և իրական գծերով նկարագրող լաւագոյն և յայտնի գրուածքներէց մէկը՝ օրինակ՝ Լև Տոլստոյ (չթարգմանուած երկերէց), Պիեր Լոտտի, Զուդերման («Johannes»), Իբսէն («Brandes») և այլն: Այսպիսով հայ ընթերցող հասարակութիւնը մի նոր առիթ կունենար քրիստոնէութեան վեհութիւնը և սրբութիւնը նրբօրէն գիտակցելու և կրհասկանալու ու կըստմոքելու վէպի անարդար տենդէնցիային հակառակ, որ «գրական փիլիսոփայութեան» և «յառաջադիմութեան» կողմնակից լինելով հանդերձ՝ կարելի է միևնոյն ժամանակ լինել անկեղծ քրիստոնեայ:

Թարգմանութեան լեզուն այնքան էլ յաջող չէ: Պատահում են գրաբար, աշխարհաբարում անդորձածելի դարձուածքներ և ձևեր, ինչպէս՝ «ի վերայ այս առեւանջի, ինք զինքն, ի յրումն այդ ամենայնի, ամիկան յետէր, ոչ ընդ երկար եւ այլն»: Մարդբաւից յոգնակի է կազմուած «մարդիկներ» (?): Կան հատուածներ, որոնք համարեա անհասկանալի են. օրինակ էջ 74 «ևս չարաճնի շարժումով կկոցեց իւր մաք-կապոյտ աչիկները եւ ժպտաց այնպիսի սիրահաճ ժպիտով առաջարկելով նորան խնձորը, որպէս զի քողմէ կծելու է կարմիր մասը», որ Լիոնէլը քննարկին կոտորեց իրեն, մոռացաւ ամեն ինչ, քացի մի քանից, — ամենահասարակը, որ ինքն փոքր մանուկ է, իսկ նա փոքրիկ աղջիկ (?):

Գրքի արդիւնքը յատկացուած է «եղբայրական օգնութեան»: Այստեղ միայն որ վէպիկը գրական — գեղարուեստական ոչ մի արժէք չունի:

Ե. Մ.

